«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

«ՎՐԱՍՏԱՆԸ»՝ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ԵՎ ՀՈՒՍԱԼԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հոծաբնակ տարածաշրջաններում ապրող քաղաքացիներին միասնական պետական տարածքում ինտեգրման աջակցությունը:

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար, դպրոցն իրականացնում է այնպիսի գործընթացներ, ինչպիսիք են տարածաշրջաններում պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատող անձանց իրավասության ու արհեստավարժության, բարձրալեռ եւ ազգային փոքրամասնություններով հոծաբնակ տարածաշրջաններում ապրող քաղաքացիներին պետական լեզվի տիրապետման ու քաղաքացիների կրթական մակարդակի բարձրացման եւ հանրային ծառայության ժողովրդականացումը: Մեր սաներից հաճախ ենք տեղեկացել, որ «Վրաստան» թերթը տեղեկատվության նշանակալի, հուսալի եւ հավասարակշռված աղբյուր է, եւ հենց Վան Բայբուրթյանի ու նրա թիմի անձնուրաց աշխատանքով ու ջանքերով այս բացառիկ թերթը միանշանակ միջնորդ է՝ իրենց ու պետության միջեւ, որ իր մեկդարյա գոյության ընթացքում «Վրաստան» թերթն իր ընթերցողներին միշտ սերմանել է հարգանք վրաց պետականության եւ սեր վրաց ժողովրդի նկատմամբ:

Եւս մեկ անգամ շնորհավորում ենք հոբելյանի առիթով, մաղթում առաջընթաց եւ հաջողություններ, մաղթում է'լ ավելի օգտավետ գործեր կատարել՝ ի բարօրություն երկրի, ինչով նշանակալի նպաստ կներդրվի պատմականորեն բարեկամական եւ եղբայրական երկու ազգերի համագործակցությանը:

ՔԵԹԵՎԱՆ ՋԱՂԵԼԻ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության Զուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարական դպրոցի տնօրեն

ԱՅՍ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԸ ԲՈԼՈՐԻՍ ՀՈԲԵԼՅԱՆՆ Է

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ծնվել, մեծացել եմ Մառնեուլիի մունիցիպալիտետի Դամիա գյուղում: Այստեղ էլ միջնակարգ կրթություն եմ ստացել: Եվ թերթի, այն ժամանակվա «Սովետական Վրաստան» թերթի առաջին շփումը հենց դպրոցական տարիներին է վերաբերում: Հիշում եմ, ինչպես էինք բաժանորդագրվում թերթին, ինչ անհամբեր էին տանեցիները սպասում թերթի հերթական համարին...

Տարիներ անց թերթում հրապարակվող նյութերը, կոնկրետ ինձ համար առավել պարզ ու ընկալելի դարձան, հստակ ընդգծվում էր պարբերականի գլխավոր առաջնահերթությունը՝ վիրահայերի շահերի պաշտպանությունը, հարգանքի սերմանումը վրաց պետականության եւ վրաց ժողովրդի նկատմամբ, հայ-վրացական բարեկամության ամրապնդումը: Եվ կարելի է ասել, որ վերոնշյալ բոլոր ուղղություններով թերթն արժանապատվորեն է կատարում իր գործը:

Կոնկրետ մեզ՝ մառնեուլցիներիս համար «Վրաստանը» տասնամյակներ շարունակ տեղեկատվության ամենահուսալի ու ճշգրիտ աղբյուրն է, որի շնորհիվ մանրամասն տեղեկություն ենք ստանում երկրում տեղի ունեցած իրադարձությունների, օրենսդրական փոփոխությունների եւ, ամենակարեւորը, վիրահայության կյանքի նշանակալի իրադարձությունների մասին: Առանձնակի ուրախություն են պատճառում մեր մունիցիպալիտետի, մեր գյուղի, ընդհանրապես մեր ծանոթների մասին թերթում տպագրված նյութերը:

Շնորհավոր տոնդ՝ «Վրաստան», երկարակեցություն եւ առաջընթաց քեզ:

ՇԱԼԻԿՈ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կենսաթոշակառու

Մառնեուլիի մունիցիպալիտետ

գ.Դամիա

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ԱՆԻ ՄՈՍՈՅԱՆ. «ՊԵՏՔ Է ԱՇԽԱՏԵՆՔ ՆՈՐ ԵՌԱՆԴՈՎ, ՈՐՊԵՍԶԻ ԱՄԵՆ ՎԱՂՎԱ ՕՐԸ ՏԱՐԲԵՐՎԻ ՆԱԽՈՐԴԻՑ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- 2017 թվականին ընտրվելով՝ առաջին կին-քաղաքապետն էի երկրում: Բնականաբար, ակնկալիքներ կային, որ տարեցտարի ոլորտը է'լ ավելի կհամալրվի կանանցով: Եվ այն, որ այս ընտրությունների արդյունքում երեք կին զբաղեցրին քաղաքապետի պաշտոն, փաստում է, որ մեր երկրում գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարությունը դրական դինամիկա է ապրում: Համարում եմ, որ քաղաքականության եւ պետական գործունեության մեջ սեռերի բաժանումն այնքան էլ ընդունելի չէ, որովհետեւ, եթե մարդը արհեստավարժ է, եթե գիտակցում է որտեղ է եւ ինչ գործիքներով պետք է աշխատի եւ ինչպես իրեն դրսեւորի, ապա սեռական պատկանելությունը երկրորդ պլան է մղվում: Քաղաքականությունն ու պետական գործունեությունը բարդ ոլորտներ են, որտեղ շատ մեծ է պատասխանատվությունը: Ուղղակի կինը երկու իրարից տարբեր ոլորտներ է համադրում՝ ընտանիք եւ քաղաքականություն: Սակայն կանայք համառություն ունեն իրենց վրա դրված պարտականությունները մինչեւ վերջ կատարելու եւ ցանկացած իրավիճակում հաղթանակած դուրս գալու առումով:

- ***Հարցազրույցներից մեկի ժամանակ նշեցիք, որ բազմաթիվ անավարտ ծրագրեր ունեք, ո՞րն է դրանցից առաջնայինը:***

- Ընթացիկ տարում լայնածավալ ծրագրեր են իրականացվում մեր մունիցիպալիտետում, որոնք ընդգրկում են գրեթե բոլոր կարեւոր ոլորտները: Մեր բնակչության կյանքի անբաժանելի մասն է կազմում եւ, բնականաբար, մեր գործունեության կարեւորագույն ուղղություններից է մշակութային կյանքի կազմակերպումը, սպորտի զարգացմանն ուղղված միջոցառումների ու ծրագրերի իրականացումը: Վերանորոգվում են գյուղերի մշակույթի տները, կառուցվում են նոր մարզադահլիճներ: Շարունակելու ենք ճանապարհաշինությունը: Կառուցելու ենք նոր մանկապարտեզներ... Սննդի հարցը լուծելով՝ գյուղերում գործող մանկապարտեզների աշխատանքային օրը դարձնելու ենք լրիվ:

- ***Նախընտրական ծրագրում ամրագրված խնդիրներից բնակչության համար առաջնային եւ մտահոգիչ է զբաղվածության հարցը: Ի՞նչ կոնկրետ քայլեր եք նախատեսում գործազրկության մակարդակը նվազեցնելու ուղղությամբ:***

- Մեր մունիցիպալիտետի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում ընդգրկված բոլոր ոլորտներում, որպես կարեւորագույն հիմնախնդիր, դրվել է գյուղատնտեսության եւ զբոսաշրջության ոլորտներում նոր աշխատատեղերի ստեղծումը, եւ դրանք կապահովվեն ժամանակի ընթացքում: Գործազրկության մակարդակի կրճատման նպատակով՝ արտադրության մեջ ավելի շատ գյուղատնտեսական նշանակության հողեր կընդգրկվեն, բարենպաստ պայմաններ կստեղծվեն գյուղմթերքներ վերամշակող ձեռնարկությունների համար, կխթանվի զբոսաշրջությունը, որի արդյունքում կստեղծվեն նոր աշխատատեղեր:

- ***Երկիրն այսօր գտնվում է համաճարակային բարդ իրավիճակում, եւ այժմ շատ կարեւոր է բնակչության ակտիվ պատվաստումը: Մեր մունիցիպալիտետում գրանցված է պատվաստումների համեմատաբար ցածր մակարդակ: Ձեր կարծիքով, ո՞րն է պատճառը եւ, ի՞նչ է պետք անել ցուցանիշը բարձրացնելու համար:***

- Մունիցիպալիտետում՝ ցավոք, մինչ օրս, շատ ցածր՝ 2135 պատվաստումները ցույց տվեցին ի սկզբանե ոչ մի բանով չարդարացված, դժբախտաբար, տարածված վախի մթնոլորտի սնանկությունը, որովհետեւ պատվաստման որեւէ բարդացման դեպք չենք ունեցել: Շրջանառվող ասեկոսների փոխարեն, ճիշտ կլինի լսել միայն ու միայն մասնագետներին, գիտակցել խնդրի կարեւորությունը եւ պատասխանատվություն կրել հարազատների, ընկերների եւ ընդհանրապես հանրության համար: Ես եւ ընտանիքիս բոլոր անդամները պատվաստվել ենք, մեր համեստ լուման ներդրել համաճարակի դեմ պայքարում:

- ***Երկրի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին՝ Ձեզ որպես Նինոծմինդայի քաղաքապետի թեկնածու ներկայացնելիս, նշեց, որ Ձեր հմուտ ու կազմակերպված աշխատաոճով օրինակելի եւ ուժեղ կին-քաղաքապետ եք ոչ միայն տարածաշրջանում, այլեւ ամբողջ երկրում: Դուք նաեւ քաղաքապետի թեկնածուների այն եռյակում եք, ովքեր ՏԻՄ ընտրություններում ստացան ընտրողների ձայների 80 տոկոսից ավելին: Ո՞րն է Ձեր՝ որպես պետական-քաղաքական գործչի ու քաղաքապետի հաջողության գրավականը:***

- Թե' նախկին աշխատանքներում, թե' հիմա, իմ բոլոր գործողությունների ու նախաձեռնությունների հիմքում եղել է սերն ու պատասխանատվությունը մարդկանց նկատմամբ ու ցանկությունը՝ կյանքը դարձնել ավելի լավը: Սա միշտ օգնել ու ոգեշնչել է ինձ, որքան էլ դժվար լինեն խնդիրները, որոնք դրվել են իմ առջեւ: Իմ աշխատանքային կենսափորձը իմ բնավորության անփոփոխ առաջնորդն է, իսկ դրանք ինձ միշտ ուղեկցում են դեպի ճշմարտություն, որը պահանջում է ինձանից շիտակ ու ազնիվ լինել նախ ինձ հետ, ապա՝ ուրիշների: Բնականաբար, նշանակալի է նաեւ պետական լեզվի լավ իմացությունը, ինչը, հոգեբանական առումով անգամ, մեծապես օգնում է երկրի ղեկավարության հետ հաղորդակցվելիս:

- ***Եվ վերջում, ի՞նչ կասեիք իրենց քվեն երկրորդ անգամ Ձեզ վստահած Նինոծմինդայի մունիցիպալիտետի բնակիչներին:***

- Շնորհակալություն եմ հայտնում մեր մունիցիպալիտետի բնակչությանը՝ մեր ստացած վստահության քվեի համար: Բոլորս համոզված ենք, որ դա անցած չորս տարիների գնահատականն էր: Գալիք չորս տարիների ընթացքում եւս աշխատելու ենք մեր ներուժն ու հնարավորությունները Նինոծմինդային ու Նինոծմինդացուն ծառայեցնելու պատրաստակամությամբ: Առաջիկա տարիներին մեր կարեւորագույն նպատակներից մեկը ղեկավարություն-բնակչություն հետադարձ կապի, ինչպես նաեւ քաղաքապետարանի նկատմամբ վստահության առավել ամրապնդումն է: Համոզված եմ, որ փոխվստահության մթնոլորտն ու քաղաքապետարանի աշխատանքներն է'լ ավելի տեսանելի կդարձնեն ավելի հարմարավետ ու բարեկարգ քաղաք, բարեկարգ գյուղեր ունենալու մեր նպատակների ու ծրագրերի արդյունքը: Իսկ դրա համար անհրաժեշտ է, որպեսզի բնակչության հետ մեր կապը լինի գործնական հիմքերի վրա, ցանկացած լավ գաղափար կամ առաջարկ լսելի լինի, քննադատության հետ պետք է հաշվի նստել, բողոքները՝ ուսումնասիրել, պատճառները հասկանալ ու գտնել լուծումներ: Պետք է աշխատենք նոր եռանդով, որպեսզի ամեն վաղվա օրը տարբերվի նախորդ օրվանից: Սա է մեր առաքելությունը, Նինոծմինդացու պահանջն ու սպասելիքը:

ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՊԵՏԱԿԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՁՆՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Նոյեմբերի 7-ին, Վրաստանի բնապահպանության եւ գյուղատնտեսության փոխնախարար Օթար Շամուգիան եւ հողի կայուն կառավարման ու հողօգտագործման մոնիտորինգի ազգային գործակալության նախագահ Գիորգի Միշվելաձեն, Ախալցիխեում հանդիպում ունեցան Սամցխե-Ջավախեթիի պետական լիազոր Բեսիկ Ամիրանաշվիլու եւ երկրամասի մունիցիպալիտետների քաղաքապետերի հետ: Հանդիպմանը նրանց ներկայացվեցին «Պետական սեփականության ներքո գտնվող արոտավայրերի» մատչելիության պետական ծրագրի մանրամասները:

Հիշեցնենք, որ վերոնշյալ ծրագիրը խոշոր եւ մանր եղջերավոր անասունների սեփականատեր ֆերմերներին հնարավորություն է ընձեռում աճուրդով ստանալ եւ եռամյա վարձակալության պայմանագրով օգտվել պետական սեփականության ներքո գտնվող արոտավայրերից: Հոկտեմբերի 6-ին Վրաստանի կառավարության հաստատած տվյալ ծրագիրը նպաստում է արոտավայրերի իրատեսական օգտագործմանը եւ անասնապահության զարգացմանը:

Ինչպես նշեց Սամցխե-Ջավախեթիի նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլին, այդ ծրագիրը հատուկ կարեւորություն ունի Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի համար, քանի որ տեղի անասնապահ ֆերմերներին հնարավորություն է ընձեռում լիարժեք օգտագործել տեղական ռեսուրսները:

COVID - 19

ՈՎ, ՔԱՆԻ ՏԱՐԵԿԱՆՈՒՄ ԵՎ ԻՆՉ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹՈՎ ԿԱՐՈՂ Է ՊԱՏՎԱՍՏՎԵԼ

Կորոնավիրուսի դեմ միջգերատեսչական համակարգող խորհուրդը, իր հերթական նիստում, ճշգրտումներ կատարեց տարբեր տարիքի քաղաքացիների, ինչպես նաեւ դեռահասների պատվաստման, առանձին տարիքային խմբերի համար նպատակահարմար պատվաստանյութի հարցում:

ԲՈՒՍՏԵՐԻ ԴԵՂԱՉԱՓԸ՝ 18 ՏԱՐԵԿԱՆԻՑ ԲԱՐՁՐ, ԱՐԴԵՆ ՊԱՏՎԱՍՏՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ

Առողջապահության նախարարի առաջին տեղակալ Թամար Գաբունիայի խոսքով, իմունականխարգելման միջգերատեսչական խորհրդի որոշմամբ, կորոնավիրուսի դեմ «խթանիչ» դեղաչափը կարող է օգտագործել 18 տարեկանից բարձր ցանկացած պատվաստանյութով պատվաստված անձը:

- Խորհրդի ընդունած հիմնական որոշումները վերաբերում են «խթանիչ» չափաբաժինների կիրառման կանոններին: «Sinopharm» եւ «Sinovac» պատվաստանյութով պատվաստված անձը կարող է օգտագործել «Sinopharm» կամ «Sinovac» պատվաստանյութը՝ որպես խթանող դեղաչափ կամ ընդունել «Pfizer»: «Astrazeneca»-ի դեպքում, 6 ամիս անց, անձը կարող է ընդունել «Pfizer»-ի «խթանիչ» դոզայի լրացուցիչ չափաբաժին: Ինչ վերաբերում է «Pfizer»-ով պատվաստվածներին, ապա նույն պատվաստանյութի բուստեր դեղորայքի ընդունումը երաշխավորված է կրկին 6 ամսվա ընթացքում,- ասաց Թամար Գաբունիան:

«Pfizer» 12-15 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վրաստանի իմունականխարգելման խորհրդի որոշմամբ, 12-ից 15 տարեկան տարիքի երեխաներին թույլատրվում է պատվաստվել կորոնավիրուսի դեմ:

Ինչպես նշեց առողջապահության փոխնախարար Թամար Գաբունիան, խորհուրդն ընդունել է նոր հակահամաճարակային կանոններ, ըստ որոնց 12-ից 15 տարիքի դեռահասներին եւս թույլ կտրվի պատվաստվել «Pfize» պատվաստանյութով:

- Այսպիսով, ծնողների որոշմամբ եւ համաձայնությամբ, որն անհրաժեշտ պայման է անչափահասների պատվաստման համար, 12-ից 15 տարեկան երեխաները եւս կարող են դիմել պատվաստման կենտրոններ եւ պատվաստվել «Pfizer» պատվաստանյութի ամբողջական չափաբաժնով,- ընդգծեց նա:

60-Ն ԱՆՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ԵՐՐՈՐԴ ՉԱՓԱԲԱԺԻՆԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՍՏԱՆԱԼ ՊԱՏՎԱՍՏՈՒՄԻՑ ԵՐԵՔ ԱՄԻՍ ԱՆՑ

Կորոնավիրուսի դեմ «Sinopharm» եւ «Sinovac» պատվաստանյութերով պատվաստված 60 տարեկանից բարձր քաղաքացիները կարող են 3-րդ չափաբաժին ստանալ ոչ թե 2-րդ չափաբաժին ստանալուց 6 ամիս հետո, այլ 3-ից 6 ամսվա ընթացքում: Այս մասին իմունականխարգելման խորհրդի նիստից հետո հայտարարեց Վրաստանի առողջապահության փոխնախարար Թամար Գաբունիան:

ԱՄԻՐԱՆ ԳԱՄԴՐԵԼԻՁԵ. «ԾԱՎՈՔ, ԴԵՌ ԿՈՒՆԵՆԱՆՔ ՄԱՀԱԾՈՒԹՅԱՆ ԱՀ»

Վրաստանի հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամդրելիձեի խոսքով, մահացության մասին խոսելը դժվար է, բայց մահացության աճ, ցավոք, կունենանք, քանի որ բուժհաստատություններում 1500-ից ավելի ծանր հիվանդ կա, իսկ արհեստական շնչառության սարքին միացված է 300-ից ավելի մարդ:

Նրա խոսքով, հոսպիտալացվածների մեծ մասը, հատկապես վերակենդանացման բաժանմունքում են:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԶԱՆՑԵՑ 252 ՄԻԼԻՈՆԸ

COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում հասել է 252 702 131-ի: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 5 096 713-ը: Ապաքինվել է 228 627 117 մարդ:

Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում **ԱՄՆ**-ն է, որտեղ կա հաստատված **47 693 516** դեպք: Այստեղ մահացածների թիվը **780 775** է, երկրորդ տեղում **Հնդկաստանն** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **34 414 186**-ի, մահացածներինը՝ **462 690**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան** է: Այստեղ վարակվել է **21 926 526**, մահացել՝ **610 323** մարդ: **Մեծ Բրիտանիայում** կորոնավիրուսով վարակվել է **9 448 402**, վարակի հետեւանքով մահացել՝ **142 533** մարդ: Մեծ Բրիտանիային հաջորդում են Ռուսաստանը, Թուրքիան, Ֆրանսիան, Իրանը, Արգենտինան ու Իսպանիան:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **325 521-ի**, մահացածներինը՝ **6 867-ի**, ապաքինվածներինը՝ **287 856-ի**:

Ադրբեջանում վարակվածների թիվը **554 096** է: Վարակից մահացել է **7 372,** ապաքինվել՝ **516 013** մարդ:

Վրաստանում, վերջին տվյալներով, վարակվել է **775 826,** մահացել՝ **10 816**, ապաքինվել՝ **708 820** մարդ:

*Նոյեմբերի 12-ին կորոնավիրուսով վարակման **4 445** նոր դեպքերից **1 704-ը Թբիլիսիում է, Աջարիայում՝ 124, Իմերեթիում՝ 868, Քվեմո Քարթլիում՝ 321, Շիդա Քարթլիում՝ 431, Գուրիայում՝ 91, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում՝ 283, Կախեթիում՝ 314, Մցխեթա-Մթիանեթիում՝ 115, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում՝ 46, Սամցխե-Ջավախեթիում՝ 148:***

Նոյեմբերի 12-ի տվյալներով մահացել է 77 մարդ:

ԻՐԱՎԻՃԱԿԸ ՏԱԳՆԱՊԱԼԻ Է. ՎԵՐՋԻՆ ՇԱԲԱԹՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԿՈՎԻԴԻՑ ՄԱՀԱՑԵԼ Է 516 ՄԱՐԴ

ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ԸՆԴՈՒՆՎԵՑ ԿՈՎԻԴ ԱՆՁՆԱԳԻՐԸ. ԻՆՉՈՒ Է ԴԱ ԱՐՎՈՒՄ, ԵՎ ՈՐՏԵՂ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼՈՒ ԱՅԴ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՉԻ ԴԱՌՆԱ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ՈՒՄ ԿՏՐՎԻ «ԿԱՆԱՉ ԱՆՁՆԱԳԻՐ»

Համակարգող խորհրդի արտակարգ նիստի ավարտին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հատուկ ճեպասուլիսում, հայտարարեց, որ դեկտեմբերի 1-ից ուժի մեջ կմտնի, այսպես կոչված, «Կանաչ անձնագիրը»:

- Դեկտեմբերի 1-ից գործի կդրվի, այսպես կոչված, «Կանաչ անձնագրի» հայեցակարգը եւ կընդլայնվի դրա շրջանակը: Ինչ է նշանակում «Կանաչ անձնագիր»: Անձը կանաչ կարգավիճակ ունի, եթե ամբողջությամբ պատվաստվել է, երկու անգամ, ունի 72-ժամյա վավերականության «ՊՇՌ» թեստ, 24-ժամյա վավերականության հակագենիկ թեստ կամ անց է կացրել կորոնավիրուս:

Կցանկանայի պարզաբանել, կարծիք կա, որ պետք է լինի վեցամսյա սահմանափակում կորոնավիրուս անցկացրած անձանց համար, բայց իմ առաջարկությունն էր՝ հանել այս սահմանափակումը, եւ խորհուրդը կիսեց իմ առաջարկը: Հետեւաբար, կորոնավիրուսով վարակված անձը կունենա կանաչ կարգավիճակ:

«Կանաչ անձնագրի» պահանջը կտարածվի 18 տարեկանից բարձր քաղաքացիների, ինչպես նաեւ զբոսաշրջիկների վրա:

Մեր խորհրդի որոշմամբ, քաղաքացիները կարող են մուտք գործել տարբեր օբյեկտներ՝ միայն «Կանաչ անձնագրի» սկզբունքով: Դրանք են սննդի կետերը, ժամանցի կենտրոնները, ժամանցի օբյեկտները, կինոթատրոնները, օպերան, թանգարանները, համերգասրահները,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ԼԾԱԿՆԵՐ

Վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու նախագահությամբ միջգերատեսչական համակարգող խորհուրդը, իր արտակարգ նիստում, ընդունեց նաեւ «Կանաչ անձնագրի» հայեցակարգի շրջանակի ընդլայնման եւ պատվաստումը խրախուսելու վերաբերյալ որոշումը:

Մասնավորապես, համակարգող խորհրդի որոշմամբ, նոյեմբերի 8-ից յուրաքանչյուր թոշակառու, ով կպատվաստվի մինչեւ 2022 թվականի հունվարի 1-ը, կստանա 200 լարի միանվագ կենսաթոշակային հավելավճար, որը կտրվի առաջին պատվաստումից հետո:

Բացի այդ, դեկտեմբերի 1-ից կգործարկվի, այսպես կոչված, «Կանաչ անձնագրի» հայեցակարգը, այսինքն՝ կանաչ կարգավիճակ կշնորհվի ամբողջովին, երկու անգամ պատվաստված, 72-ժամյա վավերականության «ՊՇՌ» թեստ, 24-ժամյա վավերականության հակագենիկ թեստ, կամ կորոնավիրուսի վարակն անցած, 18 տարեկանից բարձր քաղաքացիներին, ովքեր «Կանաչ անձնագրով» կարող են մուտք գործել սննդի օբյեկտներ, ռեստորաններ, սրճարաններ եւ բարերի բաց ու փակ տարածքներ, կինոթատրոններ, թատրոններ, օպերա, թանգարաններ, համերգասրահներ, զվարճանքի կենտրոններ, խաղատներ, ՍՊԱ կենտրոններ, մարզասրահներ, հյուրանոցներ, ինչպես նաեւ լեռնադահուկային հանգստավայրեր: Այս պահանջը տարածվելու է նշված օբյեկտների հյուրերի վրա: Ինչ վերաբերում է մանկական ժամանցի կենտրոններին, ապա «Կանաչ անձնագրի» պահանջը կտարածվի միայն 18 տարեկանից բարձր քաղաքացիների վրա:

Վարչապետի հանձնարարականով իմունիզացիայի քարոզարշավն է՛լ ավելի կակտիվանա, եւ պատվաստումների քարոզչական միջոցառումները կանցկացվեն Վրաստանի բոլոր մունիցիպալիտետներում:

ՊԱՏՎԱՍՏՈՒՄԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՉԻ

Անդրադառնալով պատվաստումների թեմային, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, ընդգծելով պատվաստման կենսական անհրաժեշտությունը, նշեց, որ պատվաստումը Վրաստանում պարտադիր չի եւ չի դառնա, եւ , որ ինքը մտադիր չէ փոխել իր որոշումը:

- Պատվաստումը պարտադիր չենք դարձրել: Մեզ մոտ պատվաստումը պարտադիր չի եւ չի դառնա: Սա մեր հաստատուն որոշումն է, եւ ես չեմ փոխի այդ որոշումը: Իհարկե, պետք է քաղաքացիներին բացատրել, օգնել նրանց, որ պատվաստումը համավարակը վերացնելու իրական լուծումն է: Պատվաստումը մեզ պաշտպանում է մահից, սա ամենակարեւոր փաստարկն է, որը մենք պետք է բացատրենք մեր քաղաքացիներին, ընտանիքի անդամներին:

Մեր քաղաքացիների մեծ մասը չի աջակցում պարտադիր պատվաստմանը: Ավելին, աշխարհի երկրների ճնշող մեծամասնությունում կամավոր պատվաստում է ընթանում: Պարտադիր պատվաստումը կոպիտ միջամտություն է մարդկանց ընտրությանը: Յուրաքանչյուր մարդ, յուրաքանչյուր քաղաքացի ունի ընտրության ազատություն: Ես՝ որպես վարչապետ, կապահովեմ, որ յուրաքանչյուր մարդ ունենա ընտրության ազատություն,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԿԱՐԱՆՏԻՆԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳՎՈՒՄ Է

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Դա շարունակվում է որպես պահանջ մնալ վերջիններիս կողմից միայն Հայաստանի տարածք օդային եւ ցամաքային սահմանային անցման կետերով մուտք գործելիս՝ COVID-19-ի ախտորոշման «ՊՇՌ» հետազոտության բացասական արդյունքը հավաստող առավելագույնը 72 ժամ վաղեմության հավաստագրի կամ կորոնավիրուսային հիվանդության դեմ ամբողջական պատվաստված՝ երկու դեղաչափ, երկրորդ դեղաչափը երկիր մուտք գործելու օրվանից նվազագույնը 14 օր առաջ ներարկված լինելը հավաստող հավաստագրի ներկայացումը:

Կառավարության նիստում Նիկոլ Փաշինյանն անդրադարձել է կորոնավիրուսային իրավիճակին եւ նշել, որ համավարակի հետ կապված մի փոքր կայունացում է նկատվում:

- Ամենօրյա թվերի մի փոքր նվազում ունենք: Հայաստանի բոլոր քաղաքացիներին կոչ եմ անում, հորդորում եմ, խնդրում եմ առաջինը պահպանել հակահամաճարակային կանոնները, մասնավորապես դիմակ կրել, եւ երկրորդը՝ պատվաստվել: Սեփական օրինակով եմ համոզվել, որ պատվաստումն այն միջոցն է, որը կօգնի մեզ հաղթահարել կորոնավիրուսի համավարակը եւ խուսափել մահերից,- ասել է վարչապետը:

Նշվել է նաեւ, որ ընդհանուր պատվաստումների թիվը 954 հազար է, որից 300 հազարը կազմում են պատվաստանյութի երկրորդ չափաբաժինը ստացածները՝ լիարժեք պատվաստվածները:

«ԿԱՄ ԿՐՈՒՄ ԵՆՔ ԴԻՄԱԿ, ՊԱՏՎԱՍՏՎՈՒՄ, ԿԱՄ ԿՅԱՆՔԻ ՈՒ ՄԱՀՎԱՆ ՊԱՅՔԱՐ ԵՆՔ ՏԱՆՈՒՄ»

Հայաստանի առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը հայտարարեց, որ կորոնավիրուսի համավարակի տարածման կանխարգելմանը միտված Հայաստանի առողջապահության նախարարի հրամանները կամ ընդհանրապես օրենքներն ու իրավական ակտերը չեն դիտարկվելու ըստ ցանկության կիրառելու կամ չկիրառելու շրջանակներում:

- Եթե դրանք արդեն իսկ հաստատված են եւ օրինական ուժի մեջ մտած, ապա պարտադիր են կիրառման Հայաստանի բոլոր քաղաքացիների համար հավասար հիմունքներով, եւ որեւէ կերպ պաշտոն կամ այլ կարգավիճակ չի կարող բացառություն լինել,- ասաց նախարարը՝ հավելելով, որ համաճարակային իրավիճակը մի փոքր կայունացել է, բայց դա չի նշանակում, որ պետք է թուլացնել հակահամաճարակային միջոցների կիրառումը:

- Ընտրությունը շատ պարզ է՝ կա՛մ մենք կրում ենք դիմակ, պատվաստվում ենք, կա՛մ մենք, մեր հարազատները կրում ենք արհեստական շնչառական ապարատ եւ, ցավոք, կյանքի ու մահվան պայքար ենք տանում,- ընդգծեց նա:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՕՐԻՆԱԳԾԵՐ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ ԵՎ...

Մեծ Բրիտանիայի Համայնքների պալատում անցկացվեց Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւի առաջին ընթերցումը:

Օրինագիծը ներկայացնելու է պահպանողական խորհրդարանական Թիմ Լաուրոնը, նպատակն է պաշտոնական ճանաչման եւ հիշատակության միջոցով ոգեկոչել Հայոց ցեղասպանությունը:

Օրինագիծն ունի հիմնական երեք դրույթ:

1-ին. Օսմանյան կայսրության եւ դրան հարակից տարածքներում 1915-1923թթ. ընթացքում հայության ջարդերի պաշտոնական որակում՝ որպես ցեղասպանություն:

2-րդ. ցեղասպանությունների, այդ թվում Հայոց ցեղասպանության զոհերի ամենամյա ոգեկոչում:

3-րդ. Հայոց ցեղասպանության եւ դրան առնչվող մարդու իրավունքների ժամանակակից խախտումների ու պատերազմական հանցագործությունների վերաբերյալ կրթության եւ հանրային տեղեկացվածության խթանում:

Մեծ Բրիտանիան արեւմտյան այն սակավաթիվ առաջատար երկրներից է, որը չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը, ինչը վկայում է արդարադատության հիմնարար հասկացությունների պահպանման կոպիտ ձախողման մասին: Թիմ Լաուրոնի օրինագիծը Մեծ Բրիտանիային հնարավորություն է տալիս շտկելու անարդարության եւ անպատժելիության այս ընթացքը:

...ԻՍՐԱՅԵԼԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

Իսրայելի խորհրդարանի մի խումբ ընդդիմադիր պատգամավորներ Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու եւ ապրիլի 24-ը որպես հիշատակի օր նշելու օրինագիծ են ներկայացրել:

Օրինագծի հեղինակներն են «Շաս» կուսակցությունը ներկայացնող պատգամավորներ Յաակով Մարգին, Հաիմ Բիտոնը, Մոշե Արբելը, ինչպես նաեւ «Լիկուդ» կուսակցության պատգամավորներ Յուլի Էդելշտեյնը, Իսրայել Կացը եւ Յոավ Կիշը:

123 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ՝ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ

2022 թվականի պետբյուջեի նախագծով, Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակին նախատեսվում է տրամադրել շուրջ 578 մլն 945 հազար դրամ:

Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանի ներկայացմամբ, գրասենյակը գործունեություն կիրականացնի երկու ուղղություններով: Հայաստան-Սփյուռք գործակցության ծրագրին կուղղվի շուրջ 374 մլն 619 հազար դրամ, իսկ Հայաստանի զարգացման գործընթացներում Սփյուռքի ներուժի ներգրավման ծրագրին՝ 204 մլն 325 հազար դրամ:

«Քայլ դեպի տուն» ուսումնաճանաչողական ծրագիրը կիրականացվի 4 փուլով՝ մինչեւ 400 հոգու մասնակցությամբ: «Սփյուռքի երիտասարդ դեսպան» միջոցառման իրականացման համար կտրամադրվի 11 մլն 806 հազար դրամ: ՀՀ եւ Արցախի կառավարություններում սփյուռքահայ մասնագետների ներգրավման «Ի գործ» ծրագրին կուղղվի 123 մլն 872 հազար դրամ: Հայաստան-Սփյուռք գործակցության իրազեկման ծրագրով կտրամադրվի 60 մլն դրամ:

Կիրականացվի «Աշխատանք սփյուռքի համայնքներում» ծրագիրը: Սփյուռքի ավելի քան 24 համայնքներ կկազմակերպեն այցելություններ: Միջոցառման իրականացման համար բյուջեից կտրվի 51 մլն 45 հազար դրամ:

Զարեհ Սինանյանի խոսքով՝ հայրենադարձության ինտեգրման նպատակով մեկ պատուհանի սկզբունքն է գործելու՝ ինտեգրումը դյուրին դարձնելու համար: Միջոցառումն իրականացվում է «Հրայր Հովնանյան» հիմնադրամի մասնակցությամբ: Նախատեսվում է տրամադրել 34 մլն 245 հազար դրամ:

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՑՈՒՅՑԸ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Նոյեմբերի 11-ին, «Հայաստան» դաշինքի կազմակերպմամբ, Երեւանի Հանրապետության հրապարակում անցկացվեց ցույց, բողոքարկելով Գորիս-Կապան մարուղում այսպես կոչված ադրբեջանական մաքսակետի տեղադրումը:

Սկզբում ցուցարարները փորձեցին մոտենալ կառավարության շենքին: Ոստիկանները ցուցարարներին թույլ չտվեցին անմիջականորեն մոտենալ Հայաստանի կառավարության շենքին: Սկսված հրմշտոցը վերածվեց ծեծկռտուքի:

Այնուհետեւ ցույցի մասնակիցները փորձեցին փակել երթեւեկությունը Հանրապետության հրապարակում, սակայն ուժայինները բառացիորեն դուրս հրեցին նրանց փողոցի երթեւեկելի մասից:

Կառավարության մոտից ոստիկանությունը բերման է ենթարկել 33 անձի՝ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու հիմքով (վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182 հոդված):

ԳԱԶԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆԸ ՉԻ ՓՈԽՎԻ

Հայաստանում սպառողների համար գազի սակագինը 2022-ի հունվարի 1-ից չի բարձրանա:

Ինչպես տեղեկացրին Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովից, սպառողների համար սակագինը հունվարի 1-ից միանշանակ չի փոխվի, սակայն ռուսական կողմի հետ սահմանին գնի հարցով բանակցությունները շարունակվում են:

Էլեկտրաէներգիայի մասով դեռ քննարկումներ են ընթանում: Երբ հանձնաժողովը վերջնական հաշվեկշիռներ ստանա, նոյեմբերի վերջին կամ դեկտեմբերի սկզբին կհայտնի: Էլեկտրաէներգիայի սակագինը կախված է նաեւ նրանից, թե սահմանին գազի սակագնի վերաբերյալ բանակցություններն ինչպես կավարտվեն:

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՉԻ ԲԱՐՁՐԱՆԱ ՆԱԵՎ ՋՐԻ ՍԱԿԱԳԻՆԸ

Հայաստանում նախատեսվում է 2022-ի հունվարի 1-ից սպառողների համար փոփոխել ջրի սակագինը, քննարկվում է ներկայիս 180 դրամի փոխարեն, առաջիկա 10 տարվա համար կայուն գին՝ 200 դրամ սահմանելու տարբերակը, իսկ սոցիալապես անապահով խմբի սպառողների համար ջրի սակագինը նախատեսվում է չփոփոխել:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տեղեկատվությամբ, հանձնաժողովն արդեն վերջացնում է Ջրային կոմիտեի եւ «Վեոլիա» ընկերության հետ քննարկումները՝ համաձայնագրի կնքման համար, որով նախատեսվում է, որ առաջիկա 10 տարվա կտրվածքով վարչավճարների փոփոխություն չի լինի՝ այսինքն, կսահմանվի մոտ 200 դրամի սակագին: Միաժամանակ շրջանառության մեջ է դրվում կառավարության որոշում, որով առաջարկվում է սոցիալապես անապահով սպառողների խումբ առանձնացնել, որոնց համար գինը չի բարձրանա:

ՎՐԱՍՏԱՆԻ ՄԱՆԳԱՐԻՆԻ 80 ՏՈԿՈՍԸ ԱՐՏԱՀԱՆՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆ

Վրաստանի Շրջակա միջավայրի պահպանության եւ գյուղատնտեսության նախարարությունից հայտնում են, որ 2021 թվականի սեպտեմբերի 1-ից նոյեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում Վրաստանից արտահանվել է 478 տոննա մանդարին: Նախարարության հրապարակած տվյալների համաձայն՝ միայն Հայաստան է արտահանվել 383 տոննա մանդարին, որն էլ կազմում է ընդհանուր թվի 80 տոկոսը: Մանդարին ներկրող երկրների թվում են նաեւ Ռուսաստանը (67 տոննա), Ուկրաինան (18 տոննա), Սլովենիան (10 տոննա): Նշվում է, որ արտահանման արժեքը կազմել է 171 հազար դոլար: Մանդարինի արտահանման ծավալն այս ժամանակահատվածում աճել է 100 տոկոսով, իսկ արտահանման արժեքը, 2020 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 54 տոկոսով:

ՄԱՀԱՑԵԼ Է ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄԱՅՐԸ

Ստեփանակերտում, նոյեմբերի 7-ին, 92 տարեկան հասակում մահացել է Հայաստանի երրորդ նախագահի Սերժ Սարգսյանի մայրը՝ Նորա Վահանի Սարգսյանը: Հայաստանի երրորդ նախագահի գրասենյակի տարածած հաղորդագրության մեջ նշված է, որ Հայաստանի երրորդ նախագահի գրասենյակը խորին ցավակցություն է հայտնում նախագահ Սարգսյանին, նրա ընտանիքին, հարազատներին եւ մերձավորներին:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՆՈՅԵՄԲԵՐ

20.11.2021 Տոն բոլոր սրբերի՝ հների եւ նորերի, հայտնիների եւ անհայտների

Հայ Եկեղեցին այս տոնով նշում է բոլոր այն սրբերի հիշատակը, որոնց անունները չեն անցել Տոնացույցի կամ եկեղեցական օրացույցի մեջ, սակայն նրանց սուրբ անունները գրված են Երկնքի արքայության սրբազան մատյանում:

Քրիստոնեական հալածանքների եւ հավատի համար մղված բազում պատերազմների ժամանակ շատերն են նահատակվել, որոնց անունները, ցավոք, չեն պահպանվել ու հասել մեզ: Ուստի, եկեղեցին հաստատել է այս նվիրական տոնը հենց նրանց հիշատակը ոգեկոչելու համար: Անձեր, որոնք իրենց թանկ արյունը հեղեցին հանուն Քրիստոսի եւ նրա խորհրդավոր մարմնի՝ եկեղեցու շինության:

ՆՈՐՈՒՅԹ

ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՏԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ ՔՆՆՉԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՎԵԼ ԵՆ

Վրաստանի ներքին գործերի նախարարության սպասարկման գործակալության բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներում արդիականացվել է քննչական մեքենաների պարկը:

Գերատեսչության հաղորդմամբ, վարորդական վկայական ստանալ ցանկացողները «B» կարգի գործնական թեստն անցնում են GPS համակարգով հագեցած ժամանակակից SKODA RAPID մակնիշի մեքենաներով:

«Ենթակառուցվածքների եւ սպասարկման որակը բարելավելու նպատակով, Սպասարկման գործակալությունը փուլային ենթակառուցվածքային եւ տեխնիկական աշխատանքներ է իրականացրել բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներում, որտեղ կարելի է գործնական քննություններ հանձնել»,- ասված է գործակալության հայտարարության մեջ:

ՀԻՇԱՏԱԿԻ ԽՈՍՔ

ՀԱՆԳՉԻՐ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՄԲ...



Խորապես ցնցված եւ վշտացած է Դամալա գյուղի հասարակությունը, հանրային դպրոցի մանկավարժական կոլեկտիվը վաստակաշատ ուսուցիչ՝ Գաբրիել Բալոյանի անժամանակ մահվան գույժից:

Գաբրիել Բալոյանը ծնվել է 1947 թվականին, Վրաստանի Ասպինձայի շրջանի Դամալա գյուղում: Տեղի միջնակարգ դպրոցը, ապա Երեւանի Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի ֆակուլտետը ավարտելուց հետո, աշխատանքային գործունեությունը սկսել է 1969 թվականին Դամալայի հանրային դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ եւ մինչ օրս աշխատում էր դպրոցում:

Դպրոցում աշխատելու տարիներին նա անձնվիրաբար կրթել եւ դաստիարակել է բազում սերունդներ՝ նրանց մեջ սեր սերմանելով մաթեմատիկայի նկատմամբ: Գաբրիել Բալոյանի բեղուն աշխատանքի շնորհիվ, Դամալայի հանրային դպրոցի աշակերտները տարիներ շարունակ մասնակցելով մաթեմատիկա առարկայից մարզային եւ հանրապետական օլիմպիադաներին՝ ունեցել են հաջողություններ, ստացել մրցանակներ եւ պարգեւատրվել պատվոգրերով:

Ասպինձայի մունիցիպալիտետի Դամալա գյուղի մանկավարժական կոլեկտիվը, անդառնալի կորստի կապակցությամբ, խորին ցավակցություն է հայտնում Գաբրիել Բալոյանի կնոջը՝ Դամալայի հանրային դպրոցի մաթեմատիկայի ուսուցչուհի Ազգանուշ Հարությունյանին, որդիներին՝ Արամ եւ Արմեն Բալոյաններին, դստերը՝ Արմինե Բալոյանին, եղբայրներին՝ Ավետիս եւ Ռուբեն Բալոյաններին, քրոջը՝ Դամալայի հանրային դպրոցի տարրական դասարանների դասվար, նախկին ուսուցչուհի՝ Լուսիկ Բալոյանին, ֆիզիկայի ուսուցիչ՝ Մինաս Տոնականյանին, հարազատներին ու մերձավորներին:

Գաբրիել Բալոյանի վառ հիշատակը կմնա բոլորիս սրտերում:

Խորին ափսոսանքով՝

Դամալայի հանրային դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՖՈՒՏԲՈԼ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՄԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՈՇՈՐ ՀԱՇՎՈՎ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Նոյեմբերի 11-ին անցկացվեցին ֆուտբոլի աշխարհի 2022 թվականի առաջնության ընտրական փուլի հերթական հանդիպումները: «B» խմբում հանդես եկող Վրաստանի հավաքականը, խմբի եզրափակիչ հանդիպմանը, վերջապես ուրախացրեց իր երկրպագուներին: Վրաց ֆուտբոլիստները Բաթումիում՝ 2:0 հաշվով պարտության մատնեցին Շվեդիայի հավաքականին: Թեեւ այդ հաղթանակը ոչ մի փոփոխություն չմտցրեց մրցաշարային աղյուսակում, սակայն, երկրպագուների շրջանում լավատեսություն առաջ բերեց թիմի հնարավոր վերելքի հարցում:

Ինչ վերաբերում է «J» խմբում հանդես եկող Հայաստանի հավաքականին, ապա այն հերթական անգամ հուսախաբ արեց երկրպագուներին՝ սեփական հարկի տակ՝ 0:5 հաշվով պարտություն կրելով Հյուսիսային Մակեդոնիայի թիմից: Հայաստանի հավաքականը մեկնարկային երեք հաղթանակով սկսված մրցաշարի վերջին հանդիպումներում կրած պարտություններից հետո, 12 միավորով զբաղեցնում է չորրորդ հորիզոնականը:

ԹԻՄԵՐ	Խ	Հ	Ո	Պ	ԽԳ	ԲԳ	Մ
Իսպանիա	7	5	1	1	14	5	16
Շվեդիա	7	5	0	2	12	5	15
Հունաստան	7	2	3	2	7	7	9
Վրաստան	**8**	**2**	**1**	**5**	**6**	**12**	**7**
Կոսովո	7	1	1	5	4	14	4

Մունդիալի ընտրական փուլի վերջին տուրում, նոյեմբերի 14-ին, Հայաստանի ընտրանին Երեւանում կընդունի Գերմանիայի հավաքականին:

ԹԻՄԵՐ	Խ	Հ	Ո	Պ	ԽԳ	ԲԳ	Մ
Գերմանիա	**9**	**8**	**0**	**1**	**32**	**3**	**24**
Հյուսիսային Մակեդոնիա	9	4	3	2	20	10	15
Ռումինիա	9	4	2	3	11	8	14
Հայաստան	9	3	3	3	8	16	12
Իսլանդիա	9	2	3	4	11	15	9
Լիխտենշտեյն	9	0	1	8	2	32	1

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 3.Գրականության այլաբանական ժանր: 9.Վրաց երգչուհի ... Բրեգվաձե: 10.Երաժշտական ձայնանիշի կես տոնով բարձրացնող նշան: 11.Քաղաքական ահաբեկման քաղաքականություն: 12.Հայ պատմիչ: 13.Հնագույն զենք եւ գործիք: 15.Որեւէ բանի փոքր քանակություն հետազոտման համար: 17.Քիմիական տարր, իներտ գազ: 19.Հայկական ազգային կերակուր: 21.Մթնոլորտային երեւույթ: 24.Հին հույն փիլիսոփա, Միլեթյան դպրոցի հիմնադիրը: 26.Խոշոր, հոյաշեն եկեղեցի: 27.Մանկական վարակիչ հիվանդություն: 28.Հին հունական քաղաքների կենտրոնական ամրացված մասը: 29.Միջնորդություն անող: 31.Հսկա օձ: 33.Հնդկաստանի դրամական միավորը: 34.Քաղաք Իսպանիայում: 36.Հին իտալական ոսկեդրամ: 37.Անապատային ծառանման բույս: 40.Այլաբանական կարճ խոսք: 43.Հայ բանաստեղծ: 45.Տոհմական կալվածատեր իշխան: 46.Ձինվորական երկար վերարկու: 47.Կարտոֆիլի մեջ մեծ քանակ պարունակող օրգանական նյութ: 48.Գետ Արեւմտյան Վրաստանում: 49.Գործնական պարապմունք բուհում:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Երկրամաս Վրաստանում: 2.Հեղուկի ծավալի չափման միավոր: 3.Ուսուցման կազմակերպման ձեւ: 4.Վրացական մանկական ամսագիր: 5.Գործող անձ՝ Շեքսպիրի «Համլետ» ողբերգությունում: 6.Հինդուիզմի աստվածներից: 7.Քաղաք Եմենում: 8.Սապատավոր ցուլ: 14.Սարդակերպերի դասի անողնաշարավոր կենդանի: 16.Լեռնագագաթ պատմական Հայաստանում, Սասունում: 18.Թերակղզի Եվրոպայում: 19.Մ.Գորկու պիեսը: 20.Ռազմագետ, ռազմավար: 22.Անգլիացի ֆիզիկոս, կլասիկ էլեկտրոդինամիկայի տեսության հիմնադիրը: 23.Որեւէ բան պահպանող: 24.Էլեկտրաունակության միավոր ՍԻ համակարգում: 25.Մրգատու ծառի պտուղ: 30.Շքեղ ամառանոց: 32.Հայ գուսան: 35.Լրագրողների հետ կազմակերպված հանդիպում: 36.Մսատու եւ մորթատու ճագարների տեսակ: 38.Տարբեր գույների ծաղիկներով գեղեցիկ բույս: 39.Երկարության հնացած միավոր, գործածության մեջ է եղել մինչեւ մետրական համակարգի ընդունումը: 41.Բնորոշ ժառանգական հատկություններով առանձնացող մարդկանց խումբ: 42.Խիտ, թավուտ անտառ: 43.Կղզի Տիրենյան ծովում, Նապոլեոնի աքսորավայրը: 44.Գյուղ Վրաստանի Մառնեուլիի շրջանում:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Գարեգին: 4.Հանճար: 9.Աննա:10.Արգավանդ: 13.Դանիել: 14.Ախ: 15.Երկրի: 16.Էլ: 18.Կրոն: 20.Ագ: 21.Ի՛ջ: 23.Հումուս: 24.Մարս: 28.Կարոտ: 29.Սար: 30.Անրի: 31.Նեպալ: 32.Սոս: 34.Սեն: 35.Ռե: 36.Շահ: 39.Մատից: 41.Գունդ: 42.Սերբ: 44.Ասլան: 45.Ցուցակ: 46.Են: 47.Սակր: 48.Լիզա: 52.Քաթան: 56.Վարորդ: 57.Մանանա: 58.ԱԹՍ: 59.Ձին:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Արգո: 3.Գլախո: 4.Հնդկաստան: 5.Անարգ: 6.Նանի: 7.Արենի: 8.Դարեհ: 11.Վարս: 12.Դե: 17.Լուսնթագ: 18.Կումիս: 19.Նման: 22.Չարենց: 25.Արես: 26.Ռոպե: 27.Ասպետ: 33.Որդան: 35.Ռաբունի: 37.Հուշիկ: 38.Կալաձե: 39.Մրցել: 40.Իրանական: 42.Սնդիկ: 43.Խոսրով: 49.Ճարպ: 50.Որդ: 51.Մուք: 52.Քաջ: 53.Անի: 54.Թան: 55.Նամ:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅՈՒՍԻՍ ՄՈՆԱՄԱՐՏՈՒ: ԹԲԻԼԻՍԻ 0105, Գ.ԱԹՈՆԵԼԻՆ ՓՈՂՈՑ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ՏԵԼ. ՀԵՌ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆ»
ԹԲԻԼԻՍԻ, ՍԱՀԱՐՈՎՅԵԼՈՎ
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445